ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2023 թվականի №--Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի №117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով 1800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի վերադասավորման վերաբերյալ «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի մայիսի 2-ի №676/23-11 գրությունը և տվյալ հարցի քննարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի օգոստոսի 16-ի №ՍԱ/34.2-Մ2-9/2990-2023 գրությանն ի պատասխան Ընկերության օգոստոսի 21-ի №1258/23-11 գրությունը, և ելնելով ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունա-վետ օգտագործման խրախուսման, դրանց արդյունավետ կառավարման, Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման, ենթակառուցվածքներում տնտեսապես արդյունավետ ներդրումների խրախուսման, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի բարելավման, նորարարության խթանման նկատառումներից՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 12-ի «Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը ռադիոհաճախականությունների հատվածների օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №117-Ա որոշման 1-ին, 2-րդ կետերում և 2-րդ կետով հաստատված հավելվածում «1780-1785ՄՀց և 1875-1880ՄՀց» թվերը փոխարինել «1760-1765ՄՀց և 1855-1860ՄՀց» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2023թ.